

իրս տեսանեմ յիրս յայս Արեաց աշխարհիս: 8 Վասն զի դուք ինքնին գիտեք եւ ամենայն Արիք՝ զաշխարհն Հայոց, թէ ո՛րպէս մեծ է եւ պիտանի, եւ մաւտ եւ սահմանակից է կայսեր իշխանութեանն, եւ զաւրէնս եւ պաշտաւն զնոյն ունի, զի կայսր զիշխանութիւն¹ Նոցա ունի: 9 Եւ եթէ եւ մերոց աւրինաց ընտանեցուցանեք զնոսա, եւ ընդելնուն, եւ կարեն ճանաչել, եթէ ցայժմ մոլորեալք էին, եւ արդ ի ճանապարհ եկեսցեն՝ այնուհետեւ զծեզ սիրեն եւ զԱրեաց աշխարհս², եւ ի կայսերէ եւ յաւրինաց Նորա եւ յաշխարհէն մերժին եւ հեռանան ի բաց: 10 Եւ լինի այնուհետեւ աշխարհն ընդ մեր սերտ սիրով եւ միաբանութեամբ: 11 Եւ յորժամ Հայք սերտիւ³ մեր լինին՝ Վիրք եւ Աղուանք այնուհետեւ մեր իսկ են: 12 Եւ իմ թելպետ եւ էր յառաջագոյն հոգացեալ զայսպիսի մեծ իրս եւ զմտաւ ածեալ ցուցանել ձեզ՝ առաւել եւս հաստատեալ յառնէն, որ ի Սիւնեաց տոհմէն՝ գիտաց հեռանալ ի մոլար աւրինացն զոր ցայժմն ունէր, եւ ընտրել զճշմարիտ եւ զհաստատուն աւրէնս մեր, զոր կամաւ եւ ախորժելով յանձն էառ. զոր ի նմանէ⁴ աւելագոյն ծանեայ եւ հաստատեցի զաւգուտ զհոգեւոր⁵ եւ զմարմնաւոր, որ յիրացս յայսցանէ լինելոց է ձերում թագաւորութեանդ եւ առ հասարակ ամենայն Արեաց աշխարհիս: 13 Այլ եւ որ սերտ սիրով ետ զանձն իւր այրն եւ ընտրեաց զլաւն՝ արժան է դիպել երեւելի փառաց եւ առաւելապէս պատուոյ բան զամենայն ընկերակիցս իւր եւ տոհմակիցս, որպէս զի տեսեալ տոհմին Նորա եւ ամենայն Հայոց աւագանւոյն զմեծամեծ բարիս եւ զշքեղութիւն, որ ի ձեռք ի վերայ Նորա յայտնի լինի, ի նախանձ գրգռեալ եւ Նոքա այսպիսի կենաց եւ բարւոյ հանդիպել⁶՝ յաւժարութեամբ յանձն առնուն զձեր հրաման, եւ մի զմիով ելելեւելալք փութան կատարել⁷ զկամս ձեր: 14 Եւ եթէ այս այսպէս լինի՝ միշտ ի խաղաղութեան եւ յանհոգութեան կայ թագաւորութիւն Արեաց աշխարհիս. ապա թէ ոչ լինիցի այս այսպէս՝ կասկածեմ յառաջիկայսն, մի՛ գուցէ որում աւրինացն են հաստատուն՝ Նոցին եւ ծառայութիւն առնել ցանկան, եւ լինի ոչ փոքր կասկած Արեաց աշխարհիս յիրացն յայնցանէ»:

15 Եւ իբրեւ զայս ամենայն յարմարումն բանից լսեր Յազկերտ արքայն Պարսից ի չարախորհուրդ եւ ի դժնամիտ հազարապետէն իւրմէ Միհրնեսէն, հաճեալ ընդ իմաստն եւ գովեալ՝ յայտնէր մոգուցն եւ այլ աւագանւոյն Արեաց զբանս ամենայն Միհրնեսէնի: 16 Եւ ամենայն Արեաց առ հասա-

1 Ձ. *Նախ*՝ զի կայսեր իշխանութիւն, *յետոյ*՝ ուղղած *այսպէս*

2 Ձ. զարեաց զաշխարհս

3 Ձ. *Նախ*՝ սրտիւ, *յետոյ*՝ ուղղած *այսպէս*

4 ՁԱտ. յոր ի նմանէ

5 ՏՏ. զօգուտ հոգեւոր

6 Ձ. *Նախ*՝ հանդիպեալ, *յետոյ* ուղղած՝ հանդիպիլ

7 ՏՏ. մի զմիով ելելալք փութով կատարեն